



Նարգելի ընթերցող,


Ձեր առջև է «Զանգվածային ոչնչացման գենքի չբարածման հայկական հետազոտական կենտրոնի» պաշտոնական ամսագրի անդրանիկ համարը: Պատմական ճշմարտությունը դարերնեթ ապացուցել է, որ գրավոր խոսքը հանդիսանում է քաղաքական գրոհի և պաշտպանության հզոր գործիք: Նրա օգտագործելը վեհ և ազգանվեր նպատակով նպաստում է օբյեկտիվ տեղեկատվության մատուցմանը, ճշգրիտ պեղական քաղաքականության սրեղծման և կիրառմանը, միջազգային հանրությանը ներկայանալ կառուցողական սկզբունքներով: Խորը գիտակցելով, որ արժարծվող ոլորտը հանդիսանում է ազգային անվտանգության կարգավորման բաղադրիչ, մեր գնահատմամբ, մեր քաղաքացիական նախաձեռնությունը հետամուտ է իր ուրույն լուծման ներդնել ներկա աշխարհաքաղաքական իրավիճակում Նայաստանի Նանրապետության դեմ ուղղված մարտահրավերների և սպառնալիքների հակազդման գործում:

4

Ինտեգրացում

ՇՆՏՎԵՏ ԱՆՊՏԱՍԿՈՒԹՅՈՒՆ

Լարս վան Դասսենը և Սարմիտ Անդերսոնը աշխատում են Շվեդիայի Ատոմային Էներգիայի Տեսչությունում (SKI), դրա բաժանմունքում, Միջազգային համագործակցության ծրագրում (SKI-ICP) որպես գլխավոր պատճենակատար և որպես Ատոմային Էներգիայի չտարածման ծրագրերի ղեկավար: Նրանց տեսակետը արտահանման վերահսկման միջազգային ռեժիմներին անդամակցելու վերաբերյալ:



6

Մասնագետի խոսք

ՎԵՐԱՆՍԿՈՒՄԸ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԱՐԳԵԼՔ ԶԻ ՆՇԱՆԱԿՈՒՄ

Երկակի նշանակության ապրանքների արտահանման վերահսկման սկզբունքների և դրանց արտահանման չափորոշիչների մասին պատմում է մինչ 2007 թ. վերջ ՅՅ երկակի նշանակության ապրանքների և տեխնոլոգիաների արտահանման վերահսկողության հանձնաժողովի քարտուղար Ռուբեն Վարդազարյանը:



10

Օրենք

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄ

Երկակի նշանակության ապրանքների և տեխնոլոգիաների արտահանման վերահսկողության և դրանց տարանցիկ փոխադրման կարգավորման հանձնաժողովի կանոնակարգն ու անհատական կազմը հաստատելու մասին:



13

Հարցում

ՏԵՂՅԱԿ ԼԻՆԵՆՈՒ ԻՐԱՎՈՒՆԸ

Այսօրվա հայ հասարակությունը որքանո՞վ է իրազեկ երկակի նշանակության ապրանքներից, արդյո՞ք տեղյակ է, որ երկրում դրանով զբաղվող կառույց կա: Փորձեցի՞ք մի հարցախույզ անել ՅՅ քաղաքացիների շրջանում՝ նրանց առաջադրելով մի քանի հարց:



14

Հեռանկար

ՄԻԱՅՆ ՖԻԶԻԿԱ ԶԷ

Ինչպես Հայաստանում զարգացնել բարձր տեխնոլոգիաները, ինչպես դիմանալ համաշխարհային մրցակցությանը, ինչպես այլումինի փոշուց ստանալ թանկարժեք քար: Այս ամենը՝ «Լազերային տեխնիկայի» օրինակով:



19

Մեր գործընկերները

ՕՓՆԵԼ ԵՎ ՉԱՐԳԱՅՆԵԼ

Հայաստանում ԱՄՆ կառավարության կողմից ֆինանսավորվում է մի ծրագիր, որի նպատակն է արտահանման վերահսկման դաշտն ավելի բարելավել և ունենալ համապատասխան մասնագետներ:



22

Գործարար մարդիկ

ՍԵՓԱԿԱՆ ՈՒՂԵԾԻՐ

«Օրբիտա» գործարանն իր հսկայական տարածքով, մի քանի մասնաշենքերով իսկական բանվորական ավան է հիշեցնում:



Իրավաբանական գործունեություն իրականացնող «Ջանգվածային ոչնչացման գենիի չրարածման խնդիրների հեղափոխական կենտրոն» ՀԿ Իրավաբանական հասցե՝ ք. Երևան, Ե.Քոչարի 1, բն. 1 Պեպ.ժեզիսարի վկայական՝ 03 Ա 059993 31.03.03թ. Խմբագրության հասցե՝ ք. Երևան, Պուշկինի 25/3

Նախագծի ղեկավար՝
Նամարի պարասխանաբու՝
Լրագրողներ՝

Ձևավորում և էջադրում՝
Լուսանկարիչ՝

Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչարանը
Տպարանակ՝ 500 օրինակ
Նյութերի լրիվ և մասնակի վերապրումը թույլատրվում է միայն խմբագրության գրավոր համաձայնությամբ:

Կարեն Գասպարյան
Ռուբեն Մելիք-Օհանջանյան
Ռուզան Խաչատրյան
Լիլիթ Գրիգորյան
Նարա Մենդեյան
Ռոբերտ Ասատրյան



Շահավետ անդամակցություն



Լարս վան Դասսեն Սաբմիտ Անդերսոն


Աշխատում են Շվեդիայի Ատոմային Էներգիայի Տեսչությունում (SKI), դրա բաժանմունքում, Միջազգային համագործակցության ծրագրում (SKI-ICP) որպես գլխավոր պաշտոնակատար և որպես Ատոմային Էներգիայի չտարածման ծրագրերի ղեկավար:

Տարիներ շարունակ բազմաթիվ պետություններ դժվարությամբ են եկել այն համոզմունքին, որ զանազան միջազգային «Արտահանման վերահսկման» ռեժիմների անդամ դառնալը ունի կարևոր նշանակություն: Այդ ռեժիմների՝ Արտոմային Մարակարարների Ղեկավարության, Վաստենարյան համաձայնագրի և անվտանգության քաղաքականություն ունեցող Ավստրալիական Խմբի անդամ դառնալը հնարավորություն է ընձեռում ներկայացնել Ձեր օժանդակությունն ու ներդրումն ունենալ պետություն ներմուծվող մասսայական ոչնչացման զենքերի վրանգի նվազեցման գործում:

Այսպիսով, պետությունները կարող են իրենք իրենց և մյուսներին հավաստիացնել արտահանման վերահսկման կարևորության մասին: Այնուամենայնիվ, առևտրական ձեռնարկություններն ունեն մի փոքր այլ մտածելակերպ: Նրանք ընդհանուր առմամբ ավելի շար նշանակություն են փալիս ֆինանսական ուղղվածությանը: Արտահանման վերահսկման համակարգը ձեռ-

նարկություններին կարող է թվալ առևտրի սահմանափակման մի ամբողջ շարք: Անվտանգության քաղաքականությունը իսկապես ազդում է առևտրական ձեռնարկությունների վրա, քանի որ կայուն փոխհարաբերությունները մյուս պետությունների հետ նույնպես սրեղծում են բարենպաստ պայմաններ ձեռնարկությունների զարգացման և բարգավաճման համար: Սակայն ավելի հստակ՝ արտահանման վերահսկումը նպաստում է առևտրի հեշտացմանը: Իհարկե, արտահանման վերահսկումը առաջացնում է արգելքներ որոշակի ապրանքները որոշակի նպատակներով արտահանելու համար: Բայց կան նաև այլ փոստակցություններ: Դառնալով արտահանման վերահսկման ռեժիմի անդամ՝ պետությունը միևնույն ժամանակ դառնում է միակարծիք պետությունների «Ակումբի» անդամ: Այս պետությունները սովորաբար փոխհիկապես և փոփոխապես չափազանց զարգացած են, և «Ակումբի» անդամ հանդիսանալը թույլ է փալիս օգրվել որոշակի իրավունքներից: Ավելի հեշտ է դառնում այլ անդամ երկրներից ներմուծումը և այնպես արտահանումը: Այսպիսով, մի խումբ հարուստ երկրներ արտահանելու և ներմուծելու գործընթացը դառնում է ավելի արդյունավետ, քանի որ այն հիմնված է վստահելի հարաբերությունների վրա:

Մեր կողմից հղված փոփոխվողության նպատակն է մեր հայաստանյան գործընկերներին հավաստիացնել արտահանման վերահսկման կարևորությունը պետության, ընկերությունների և անհատների համար: Մենք ոգեշնչվում ենք կայունությամբ, վստահելի բարեկամական հարաբերություններով, փոփոխական աճով և անձնական ապահովությամբ և անվտանգությամբ: Արտահանման վերահսկումը միջազգային ռեժիմների և ազգային գործակալությունների միջոցով նպաստում է այս ամենին:



Ֆինանսական Ակադեմիա



Ճանապարհի դեպի
ֆինանսների աշխարհ

Երևան, 0010, Պուշկինի 25
Հեռ.՝ +374 10 538 607, 534 396
Ֆաքս՝ +374 10 539 148
Էլ. փոստ՝ ges@financacademy.am
www.financacademy.am



ՎԵՐԱՅՍԿՈՒՄԸ ԱՐՏԱՅԱՆՄԱՆ ԱՐԳԵԼՔ ԶԻ ՆՇԱՆԱԿՈՒՄ

ԱճԵՍԱՐՇՈՒՄ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՄ ԳԱՆՎԱԾՍՅԱՆ ՈՉՆՉՍՅԱՄԱՆ ԳԵՆԵՐԻ` մԻԳՐԱԿՍԻԱ, քԻՄԻՍԿԱՆ, ԿԵՆԱՄԲՄԱՆԿԱՆ ՈՒ ԲԱԿՏԵՐԻՈՂՈՎԱԿԱՆ ԵՒ ՀՐԹԻՋՍԻԱ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԳՏԱՐԱԾՄԱՆ 4 ՈՒԺԻՄ: ԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՉՍԿԱԳԻՐՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒՅ ԱՆՄԻ-ԳՍՊԵՆ ՀԵՏՈ ՀՍՅԱՍԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՅԱ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՄԻԳՐԱԿՍԻԱ ՓԱՍՏԱԹՎԹԵՐԻՅ Է մԻԳՐԱԿՍԻԱ ԳԵՆԵՐԻ ԳՏԱՐԱԾՄԱՆ ՀՈՉՍԿԱԳՐԻՆ մԻՆԱՍԽՈՒ ՄՍԱԻՆ ՀՍՅԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ: ՀԵՏԱԳՍՅՈՒՄ ԱՏԵԾՎԵՅԻՆ ՆԱԵՒ ՀՍՏՈՒԿ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԱՆԵՐ, ՈՐՈՒՅՆ ԿՊԱՏԱԿԸ ՀՍՅԱՍԱՆԻՅ ԱՐՏԱՀԱՆՎՈՂ ԵՐԿԱԿԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՂԱՇՏՈՒՄ ՎԵՐԱՀԱԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՅՈՒՄՆ ԷՐ: ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ, ԵՐԿԱԿԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՎԵՐԱՀԱԿՄԱՆ ԱԿՉԲՈՒՄՔՆԵՐԻ ԵՒ ՂՐԱՅՆ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԳՍՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ մՍԱԻՆ ԶՐՈՒՅԵՅԻՆՔ մԻՆՉ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՎԵՐՁԸ ՀՀ ԵՐԿԱԿԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԵՒ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՎԵՐԱՀԱԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ քԱՐՏՈՒՊԱՐ ՈՒՐԷՆ ՎԱՐՂԱԶԱՐՅԱՆԻ ՀԵՏ:

Նարգուզույցը վարկց Ռուզան Իսաչարյանը

- Միջուկային զենքի չփարածման կոն-վենցիային Նայասպանի միանալը լուրջ քայլ էր երկրասարդ պետության համար: Նայասպանը դրանով ապացուցեց միջազգային հանրությանը, որ չի մասնակցի միջուկային զենքի փարածմանը և գերծ է մնում նման «խաղերից»: Նայասպանը նաև հայտարարեց, որ այլ ռեժիմներին և հռչակագրերին միանալու խնդիր առկա չէ, քանի որ չունի, չի արտադրում և չի էլ արտադրելու ԶՈԶ: Սակայն չմիանալով՝ մեր երկիրը միշտ համագործակցել է չփարածման բոլոր ռեժիմներին և հռչակագրերին:

Նամապարասխան հայտարարություններից հետո ՆՏ նախագահի հրամանագրով սրեղծվեց աշխարանքային խումբ՝ հանձնաժողով, որի ուսերին էր արտահանման վերահսկման ողջ բեռը: Նանձնաժողովը որոշում էր՝ սա երկակի նշանակության ապրանք է, թե՛ ոչ, կարելի՞ է այն արտահանել Նայասպանից, թե՛ ոչ: Սկզբնական փուլում որևէ իրավական չափորոշիչ չէր գործում:

- Ի՞նչ չափորոշիչներով պետք է պարզել՝ որ ապրանքն է երկակի նշանակության, որը՝ ոչ:

- Օրենքը հստակ սահմանում է՝ որոնք են այդ ապրանքները: Իսկ ավելի պարզ՝ նշենք, որ երկակի նշանակության ապրանքները և տեխնոլոգիաները նրանք են, որոնք զանգվածային ոչնչացման զենքի արտադրության մեջ են օգտագործվում՝ միաժամանակ կիրառվելով քիմիայի և ֆիզիկայի մեջ և այլ բնագավառներում: Դրանք կարող են լինել հասարակ մերտադակն ծովավաճքներից սկսած ընդհուպ մինչև բարդ տեխնոլոգիաներ: Իսկ վերահսկվող ապրանքների ցանկը կազմված է ոչ թե ապրանքների հատուկ անունները նշելով, այլ որոշակի սկզբունքով՝ ապրանքներ, որոնք համապարասխանում են այս կամ այն ֆիզիկական կամ քիմիական չափանիշներին: Իհարկե, կան նաև կոնկրետ ապրանքատեսակների հստակ անուններ:

- Նայասպանում այդ ցանկը կազմելու համար ի՞նչ սկզբունքների վրա եք հենվել:

- 1999 թ. ՆՏ կառավարության որոշմամբ սահմանվեց երկակի նշանակության

ապրանքների ցանկը: Դա ԱՊՏ երկրների մոդելային ցանկի մշակված տարբերակն էր, որը գործեց մինչև 2004 թվականը: 2004 թվականին ՆՏ Ազգային ժողովի կողմից ընդունվեց «Երկակի նշանակության ապրանքների և տեխնոլոգիաների արտահանման վերահսկման ու ՆՏ փարածքով դրանց փարանցիկ փոխադրման կարգավորման մասին» օրենքը, որն արտահանող սուբյեկտների համար սահմանեց որոշակի և հստակ կանոններ: Նույն թվականին հաստատվեցին նաև վերահսկվող ապրանքների նոր ցանկեր, որոնք լիովին համապարասխանում են միջազգային չափանիշներին և հիմնված են Եվրոպական Միության մոդելային ցանկերին: Այսօր ոչ թե կառավարության որոշմամբ, այլ օրենքի տարրին համապարասխան պետք է իրականացվի ցանկացած սահմանափակում: Եթե ինչ-որ քննարկարոտ սուբյեկտին թույլ չի տրվում ապրանք արտահանել որևէ երկիր, ապա այն միմիայն օրենքից է բխում, այլ ոչ թե հանձնաժողովի անդամների կամքից:

- Ներկայումս Նայասպանում որքա՞ն է այն գործարարների թիվը, որոնք երկակի նշանակության ապրանք են արտադրում և արտահանում:

- Նայասպանը փոքր երկիր է, և այս դաշտում հեղափոխություններ ունի գործարարների մի փոքր խումբ: Նման իրավիճակում վերահսկվող արտահանումների շրջանակը նեղանում է, այսինքն՝ հանձնաժողովը հստակ գիտի, թե որ կազմակերպություններն են զբաղվում վերահսկվող ապրանքների արտահանմամբ կամ այն ապրանքների արտադրությամբ, որոնք անհրաժեշտ է վերահսկել: Այնուամենայնիվ, սա չի նշանակում, որ շուկայում նոր արտահանող չի կարող հայտնվել: Ի դեպ, արտահանման վերահսկման ոլորտում աշխատողների հետ բազմաթիվ դասընթացներ են անցկացվում, որոնց հանգամանորեն բացառվում է, թե ինչ է նշանակում երկակի նշանակության ապրանք, ընդհուպ մինչև նման ապրանքների լուսանկարների ցուցադրությունը և այլն: Մի դիտարկում ևս. արտահանման վերահսկման դաշտում իսպառ բացակայում է կոռուպցիան, քանի որ ոլորտի մասնագետները պարզորոշ



պատկերացնում են, որ մեկ արտահանողին լավություն անելու պարագայում պատժամիջոցի է ենթարկվելու Նայաստանի Նանրապետությունը: Նայաստանը հայտարարել է, որ թույլ չի փախու իր երկրից, օրենքի խախտմամբ, արտահանել երկաթի նշանակության ապրանք, ուրեմն հենց Նայաստանի հանդեպ էլ պատժամիջոց կկիրառվի: Իսկ ընկերությունը կպատժվի ՆՏ օրենքով սահմանված կարգով:

- Օրենքի ընդունումից հետո Նայաստանից երբևէ արգելված ապրանքատեսակի արտահանման դեպք արձանագրվե՞լ է:

- Օրենքի ու դրանից բխող կարգերի ընդունումից և հանձնաժողովի ստեղծումից հետո Նայաստանն այդպիսի խնդրի առաջ չի կանգնել: Մեկ դեպք եմ հիշում, երբ ՆՏ-ից ապօրինի արտահանվել է այդօրինակ ապրանք և այժմ մեղավոր անձինք կրում են օրենքով նախատեսված պատիժ՝ մաքսանենգություն հողվածով:

Կա հստակ քաղաքական գիծ, թեկուզև ի վնաս Նայաստանի, բայց արգելել այդպիսի ապրանքի արտահանումը: Ավելի լավ է քիչ շահույթ ստանալ, քան ունենալ միջազգային մակարդակի խնդիրներ: 2000 թվականից աշխատելով հանձնաժողովի կազմում՝ 2 դեպք է արձանագրվել, երբ արգելվել է երկաթի նշանակության ապրանքի արտահանումը, քանի որ գնորդ կազմակերպությունը հավաք չէր ներշնչում: Մենք ցանկացած պարագայում հնարավորություն ունենք ստուգելու և արտահանող, և

ներկրող կազմակերպությունների հեղինակությունը և գործունեության ոլորտը: Անկախ այն հանգամանքից, թե ինչ փաստաթուղթ են ներկայացնում, հանձնաժողովի անդամները մեկ անգամ ևս իրենց օղակների միջոցով ստուգում են արտահանմանը վերաբերող փաստաթղթերը, ինչպես նաև ներկայացված վերջնական օգտագործողի հավաստագրի իսկությունը և հավաստիությունը:

- Ինչքա՞ն է փնտրում վերջնական օգտագործողի հավաստագրի ստուգման և արտահանման թույլտվություն փախու գործընթացը:

- Ըստ օրենքի՝ 45 օրից ոչ ավելի: Սակայն գրեթե միշտ այն փնտրում է մեկ շաբաթից մինչև 20 օր: Սկզբնական շրջանում գործարարները դժգոհում էին, քանի որ հայտը ներկայացնելուց անմիջապես հետո թույլտվություն էին պահանջում: Այժմ նրանք փեղյակ են, որ գործընթացը ժամանակատար է, և նախօրոք են հայտը ներկայացնում: Վերջին փարիններին նման խնդիրներ գրեթե չեն լինում: Շատ հրապապ դեպքերում հանձնաժողովը, գնալով ընդառաջ արտահանողներին, արտահերթ նիստ է հրավիրում:

- Նանձնաժողովի անդամները ո՞ր ոլորտներից են:

- Նանձնաժողովի կազմում են՝ կառավարության աշխատակազմի ղեկավարը՝ հանձնաժողովի նախագահ, Էկոնոմիկայի, արտաքին գործերի փոխնախարարները, կառավարության աշխատակազմի, պաշտպանության, էներգետիկայի նախարարությունների, ազգային անվտանգության ծառայության, մաքսային պետական կոմիտեի և առևտրաարդյունաբերական պալատի ներկայացուցիչները: Անհրաժեշտության դեպքում հանձնաժողովի նիստերին կարող են հրավիրվել նաև արտահանող կազմակերպության ներկայացուցիչները:

- Նանձնաժողովի քվեարկությունը ի՞նչ մեխանիզմով է իրականացվում:

- Բոլոր որոշումներն ընդունվում են միաձայն: Եթե անգամ մի կառույց դեմ է քվեարկում, ապա ապրանքը չի արտահանվում:

- Արդյո՞ք արտահանման վերահսկումը կարելի է նույնացնել ապրանք-

ների արտահանման արգելքի հետ

- Ոչ, իհարկե: Ապրանքների արտահանման վերահսկում չի նշանակում արտահանման արգելում: Նակառակը, թույլատրվում և խրախուսվում է նույնիսկ երկակի նշանակության ապրանքների արտահանումն այն երկրներ և այն սպառողներին, որպեսզի դրանք չեն օգտագործվի զանգվածային ոչնչացման գնեքի սրեղծման համար: Խնդիրը ոչ թե արգելումն է, այլ վերահսկումը: Նանձնաժողովին ընդամենը պետք է համոզվել, որ չնայած ապրանքը երկակի նշանակության է, այն չի արտահանվի այնպիսի երկիր, որպեսզի կօգտագործվի ԶՈԶ-ի արտադրության համար:

- **Մտացվում է, որ բացի երկակի նշանակության ապրանքների ցանկից, գոյություն ունի նաև երկրների ցանկ, որպեսզի արգելված է արտահանել:**

- Չկա երկրների ցանկ: Օրենքի պահանջն այնպիսին է, որ պետք է ներկայացված լինի ապրանքի վերջնական օգտագործողի հավաստագիրը, որով փաստված կլինի, որ արտահանվող ապրանքը չի օգտագործվի ԶՈԶ-ի արտադրության համար: Նայաստանը կարող է լինել նաև փրանցիկ երկիր: Այս պարագայում Նայաստանը պահանջում է իրեն ներկայացնել արտահանող երկրի համապատասխան պետական մարմնի կողմից փրամադրված արտահանման թույլտվությունը և վերջնական օգտագործողի հավաստագիրը, որը վավերացված կլինի ներկրող երկրի համապատասխան լիազորություններ ունեցող պետական մարմնի կողմից:

- **Իսկ եթե Նայաստանը փրանցիկ երկիր է հանդիսանում, ապա մեր երկիր մտնող ապրանքի համար էլ Ձեր հանձնաժողովի թույլտվությունն է հարկավոր:**

- Արտահանող և գնորդ երկրներն արտահանման վերահսկման դաշտում պետք է համաձայնություն ունենան: Եթե Ռուսաստանը և Իրանը համաձայնության են եկել, և Նայաստանը դառնում է ապրանքի համար փրանցիկ փոխադրման երկիր, ապա հանձնաժողովը ընդամենը կարգավորող գործառույթ է իրականացնում՝ ստուգելով արտահանմանը վերաբերող փաստաթղթերի

Արտահանման վերահսկման դաշտում խստագույն բացակայում է հովանավորչությունը, կոռուպցիան: Ուրոսի մասնագետները գի-սեն, որ մի մարդու լավությունն անելու պարագայում պատժամիջոցի է ենթարկվելու Հայաստանի Հանրապետությունը:

թերի ճշգրիտ և հավաստի լինելը:

- **Ենթադրենք՝ որևէ գործարար ցանկանում է խողովակ արտադրել, որը որոշ իմաստով ընդգրկված է վերահսկվող ապրանքաբեռակների ցանկում: Նա կարող է իր ապրանքը Նայաստանում ազատ սպառել, իսկ արտահանման դեպքում պարտադիր է Ձեր հանձնաժողովի թույլտվությունը:**

- Այո, փեսակներ կան, որոնք ընդգրկված են վերահսկվող ապրանքների ցանկում: Խողովակի մեքադի ձուլվածքից, պարերի հասարակությունից որոշվում է, թե այն երկակի նշանակության է, թե՛ ոչ: Եթե մասնագետները եզրակացնեն, որ այն երկակի նշանակության է, ապա փվյալ խողովակի արտահանումն անպայման կվերահսկվի: Մակայն հարկ է նշել, և դա շատ կարևոր են համարում, որ պետությունը՝ ի դեմս հանձնաժողովի, խրախուսում և նպաստում է բոլոր արտահանողներին, եթե արտադրողը կամ արտահանողը ներկայացնում են արտահանման օրինականությունը հավաստող անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը:



«2» մարտի 2004 թ.

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄ

19 փետրվարի 2004 թվականի N 212-Ն

ԵՐԿԱԿԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՏԱՐԱՆՅԻԿ ՓՈԽԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՆ ՈՒ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նամաձայն «Երկակի նշանակության ապրանքների և տեխնոլոգիաների արտահանման, ինչպես նաև Նայասարանի Նանրապեղության փարածքով դրանց փարանցիկ փոխադրման վերահսկողության մասին» Նայասարանի Նանրապեղության օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Նայասարանի Նանրապեղության կառավարությունը որոշում է.

1. Նաստարել՝

ա) երկակի նշանակության ապրանքների և տեխնոլոգիաների արտահանման վերահսկողության և դրանց փարանցիկ փոխադրման կարգավորման հանձնաժողովի կանոնակարգը՝ համաձայն N 1 հավելվածի.

բ) երկակի նշանակության ապրանքների և տեխնոլոգիաների արտահանման վերահսկողության և դրանց փարանցիկ փոխադրման կարգավորման հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Նայասարանի Նանրապեղության կառավարության 1999 թվականի փետրվարի 8-ի «Երկակի նշանակության ապրանքների և տեխնոլոգիաների արտահանման վերահսկողության հանձնաժողովի մասին» N 59 և մարտի 30-ի «Երկակի նշանակության ապրանքների և տեխնոլոգիաների արտահանման վերահսկողության հանձնաժողովի կանոնադրությունը հաստատելու մասին» N 190 որոշումները:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հավելված N 1

ՀՀ կառավարության

2004 թվականի փետրվարի 19-ի

N 212-Ն որոշման

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԵՐԿԱԿԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՏԱՐԱՆՅԻԿ ՓՈԽԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Երկակի նշանակության ապրանքների և տեխնոլոգիաների արտահանման վերահսկողության և դրանց փարանցիկ փոխադրման կարգավորման հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) ստեղծվել է «Երկակի նշանակության ապրանքների և տեխնոլոգիաների արտահանման, ինչպես նաև Նայասարանի Նանրապեղության փարածքով դրանց փարանցիկ փոխադրման վերահսկողության մասին» Նայասարանի Նանրապեղության օրենքի (այսուհետ՝ օրենք) 7-րդ հոդվածի համաձայն, արտահանման վերահսկողության բնագավառում Նայասարանի Նանրապեղության պետական մարմինների գործունեության և արդյունավետ համագործակցության ապահովման, արտահանման վերահսկողության աշխատանքների

րապեղության փարածքով դրանց փարանցիկ փոխադրման վերահսկողության մասին» Նայասարանի Նանրապեղության օրենքի (այսուհետ՝ օրենք) 7-րդ հոդվածի համաձայն, արտահանման վերահսկողության բնագավառում Նայասարանի Նանրապեղության պետական մարմինների գործունեության և արդյունավետ համագործակցության ապահովման, արտահանման վերահսկողության աշխատանքների

կազմակերպչական-մեթոդական ղեկավարման նպատակով:

2. Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնակարգով:

II. ՎՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾԱՌՈՒՄԻ ՅԹՆԵՐԸ

3. Հանձնաժողովի գործառույթներն են՝

ա) Հայաստանի Հանրապետությունում արտահանման վերահսկողության զարգացման և կատարելագործման միջոցառումների մշակումը.

բ) վերահսկվող ապրանքների ցուցակների մշակման աշխատանքների իրականացումը.

գ) օրենքով նախատեսված ղեպքերում՝ վերահսկվող ապրանքների արտահանման թույլտվության տրամադրումը, մերժումը կամ տրամադրված թույլտվության գործողության դադարեցումը.

դ) արտահանման վերահսկողության ոլորտում միջազգային համագործակցության հարցերի քննարկմանը մասնակցությունը.

ե) արտահանման վերահսկողության ոլորտում գործառույթներ իրականացնող Հայաստանի Հանրապետության պետական մարմինների փոխադասարկությունների քննարկումը.

զ) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով արտահանող սուբյեկտների հաշվառումը.

է) արտահանող սուբյեկտներին արտահանման վերահսկողությանը վերաբերող Հայաստանի Հանրապետության օրենսդրության և արտահանման վերահսկողության միջազգային ռեժիմների վերաբերյալ խորհրդարկության տրամադրումը.

ը) վերահսկվող ապրանքների տարանցիկ փոխադրման մասին արտահանող սուբյեկտի ծանուցումների ընդունումը և գրանցումը, արտահանման վերահսկողության գործընթացի մասնակից իրավասու մարմիններին տեղեկատվության տրամադրման կազմակերպումը:

4. Հանձնաժողովն իր գործառույթների իրականացման համար իրավունք ունի՝

ա) Հայաստանի Հանրապետությունում՝ արտահանման վերահսկողության ոլորտում համապատասխան գործառույթներ իրականացնող պետական մարմիններից, կազմակերպություններից, փորձաքննություն իրականացնող

անձանցից և վերահսկվող ապրանքներ արտահանող սուբյեկտներից (այսուհետ՝ արտահանող սուբյեկտ) հայցելու անհրաժեշտ նյութեր և տեղեկատվություն.

բ) սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարություն և ներկայացնելու առաջարկություններ՝ քննարկման.

գ) հանձնաժողովի առջև դրված խնդիրների լուծման նպատակով ստեղծելու ժամանակավոր աշխատանքային խմբեր՝ առանձին հարցերի մշակման կամ քննարկման համար.

դ) արտահանող սուբյեկտներից ընդունելու դիմումներ ու հայտեր, պատասխանելու դրանց կամ փայլու պարզաբանումներ:

III. ՎՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՄԻ ՆՈՒՄԵՐՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

5. Հանձնաժողովն ունի նախագահ, նախագահի տեղակալ, հանձնաժողովի անդամներ և քարտուղար (առանց քվեարկման իրավունքի): Հանձնաժողովի անդամներն իրենց պարտականությունները կատարում են հասարակական հիմունքներով:

6. Հանձնաժողովի աշխատանքները կազմակերպվում են նիստերի ձևով, որոնք հրավիրվում են վերահսկվող ապրանքների արտահանման թույլտվություն ստանալու մասին դիմումը (այսուհետ՝ դիմում) քննարկելու համար, սակայն առնվազն յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ: Անհրաժեշտության դեպքում, հանձնաժողովի նախագահի կամ անդամներից մեկ երրորդի նախաձեռնությամբ, կարող են հրավիրվել արտահերթ նիստեր՝ հեղեղյալ ղեպքերում՝

ա) օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված ղեպքում՝ արտահանման թույլտվության գործողությունը դադարեցնելու մասին որոշում ընդունելու նպատակով,

բ) արտահանող սուբյեկտներին արտահանման վերահսկողության ու արտահանման վերահսկողության միջազգային ռեժիմների զարգացումների վերաբերյալ անհրաժեշտ խորհրդարկություն տրամադրելու և տեղեկատվություն տրամադրելու անհրաժեշտության առաջացումը.

գ) օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված վերջնական օգտագործողի պարտավորության խախտումը փաստող տեղեկությունների ի հայտ գալը:

7. Հանձնաժողովի նիստերը վարում է հանձնաժողովի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում՝ հանձնաժողովի նախագահի

տեղակայված կամ, հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ, հանձնաժողովի անդամներից որևէ մեկը:

8. Օրակարգում ընդգրկված առանձին հարցերի քննարկմանը մասնակցելու համար հանձնաժողովի նիստերին կարող են հրավիրվել պետական մարմինների ներկայացուցիչներ, ինչպես նաև գիտնականներ, փորձագետներ կամ համապատասխան այլ մասնագետներ՝ հանձնաժողովի նախագահի կամ տվյալ նիստում նախագահողի հրավերով:

9. Արտահանող սուբյեկտի դիմումը՝ անհրաժեշտ փաստաթղթերի հետ միասին, հանձնաժողովում մուտքագրվելուց հետո եռօրյա ժամկետում ներկայացվում է հանձնաժողովի անդամներին: Հանձնաժողովի անդամները դիմումի վերաբերյալ իրենց կարծիքը հանձնաժողովի նախագահին են ներկայացնում գրավոր՝ այն սրանալուց հետո 10 օրվա ընթացքում: Այդ ժամկետը, լրացուցիչ ուսումնասիրություն պահանջվելու դեպքում, կարող է երկարաձգվել մինչև 20 օր:

10. Հանձնաժողովի նիստի օրակարգի, ինչպես նաև քննարկվելիք հարցերի մասին տեղեկատվությունը, հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ, հանձնաժողովի քարտուղարն ուղարկում է հանձնաժողովի անդամներին և նիստի այլ մասնակիցներին՝ հանձնաժողովի նիստից առնվազն 7 օր առաջ (բացառությամբ արտահերթ նիստերի):

11. Հանձնաժողովի նիստերն իրավագոր են, եթե դրանց մասնակցում է հանձնաժողովի անդամների երկու երրորդը: Հանձնաժողովի վերահսկվող ապրանքների արտահանման թույլտվություն փախու մասին որոշումներն ընդունվում են հանձնաժողովի բոլոր անդամների դրական կարծիքի դեպքում: Եթե հանձնաժողովի նիստից բացակայում է նրա անդամներից որևէ մեկը, ապա հաշվի է առնվում նրա սույն կանոնակարգի 9-րդ կետի երկրորդ պարբերությունում նշված գրավոր կարծիքը: Հանձնաժողովի մյուս որոշումներն ընդունվում են հանձնաժողովի նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ: Նիստերի արձանագրությունները, ինչպես նաև որոշումներն ստորագրում է հանձնաժողովի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում՝ հանձնաժողովի նախագահի տեղակալը:

12. Հանձնաժողովն ունի կնիք և ձևաթուղթ՝ իր անվանմամբ:

13. Հանձնաժողովի նախագահը՝

ա) հրավիրում է հանձնաժողովի նիստերը և նախագահում է դրանք:

բ) ղեկավարում է հանձնաժողովի աշխատանքները:

գ) ստորագրում է հանձնաժողովի որոշումը, նրա գործունեությանն առնչվող մյուս փաստաթղթերը:

դ) ներկայացնում է հանձնաժողովը պետական և ոչ պետական մարմիններում ու կազմակերպություններում:

ե) իրականացնում է սույն կանոնակարգից բխող այլ լիազորություններ:

14. Հանձնաժողովի քարտուղարը՝

ա) ընդունում է արտահանող սուբյեկտի կողմից ներկայացված դիմումը, ինչպես նաև ստորագրում է դիմումի հետ միասին ներկայացված՝ օրենքով նախատեսված անհրաժեշտ փաստաթղթերի և տեղեկատվության ամբողջականությունը: Անհրաժեշտ փաստաթղթերի կամ տեղեկատվության բացակայության կամ թերի լինելու դեպքում արտահանող սուբյեկտից պահանջում է վերացնել թերությունները:

բ) մուտքագրում է դիմումը և վարում դիմումների հաշվառման մատյան:

գ) հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ հանձնաժողովի անդամների քննարկմանն է ներկայացնում դիմումը՝ անհրաժեշտ փաստաթղթերի հետ միասին:

դ) հանձնաժողովի անդամներին հայտնում է հանձնաժողովի նիստի օրվա մասին և ուղարկում է օրակարգը:

ե) վարում է հանձնաժողովի նիստի արձանագրությունը:

զ) նախապարաստում է վերահսկվող ապրանքների արտահանման թույլտվության փորձադրման կամ մերժման մասին հանձնաժողովի որոշումների նախագծերը՝ հանձնաժողովի նախագահի ստորագրմանը ներկայացնելու համար:

է) օրենքով սահմանված ժամկետում հանձնաժողովի որոշման մասին գրավոր ծանուցում է արտահանող սուբյեկտին:

ը) իրականացնում է արտահանող սուբյեկտների հաշվառումը:

թ) ընդունում է վերահսկվող ապրանքների՝ Նայաստանի Հանրապետության փորձադրվող փորձանցիկ փոխադրման մասին ծանուցումները, գրանցում հանձնաժողովի համապատասխան գրանցամատյանում և օրենքով սահմանված ժամկետներում հայտնում համապատասխան մարմիններին:

ժ) իրականացնում է այլ գործառնություններ՝ հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ:

ՏԵՂՅԱԿ ԼԻՆԵՆՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ

Պատրաստեց Ռուզան Խուսապրյանը

«Երկակի նշանակության ապրանք» հասկացությունը ունի համապատասխան վերահսկման փիրույթ և հսկակ սահմանված չափորոշիչներ: Այսօրվա հայ հասարակությունը որքանով է իրազեկ այս բնագավառից, արդյո՞ք փեղյակ է, որ երկրում դրանով զբաղվող կառույց կա: Փորձեցինք մի հարցախույզ անել ՏՏ քաղաքացիների շրջանում նրանց առաջադրելով հետևյալ հարցերը.

1. Տեղյա՞կ եք «երկակի նշանակության ապրանք» հասկացության մասին, ի՞նչ է այն նշանակում:

2. Ո՞վ պետք է վերահսկողություն իրականացնի կամ համակարգի այդ ոլորտը:

3. Նայաստանում ո՞ր ոլորտը կամ բնագավառը կարող է ներքաշված լինել զանգվածային ոչնչացման գեներ սփռելու աշխատանքներին:

Առաջին հարցը լսելիս հարցվողների կեսից ավելին փոքր-ինչ փարակուսում էին: Գրեթե 51 փոկոսը նշեց, որ թեև լսել է այդ մասին, սակայն դժվարանում է բացատրել, թե ի՞նչ է նշանակում երկակի նշանակության ապրանք, իսկ մյուս մասն այս մասին նույնիսկ չէր էլ լսել: Մեր այն դիտարկումից հետո, թե երկակի նշանակության ապրանքները միաժամանակ կարող են օգտագործվել փոփոխության և զանգվածային ոչնչացման գեների արտադրման մեջ, հարցվողներից ոմանք նշում էին, որ եթե նման խնդիրներ կան, ինչո՞ւ առավել հաճախ չեն խոսում այդ թեմայի շուրջ, որպեսզի հասարակությունը որոշակի կարծիք ունենա այդ ոլորտի մասին:

Երկրորդ հարցին պատասխանելիս շուրջ 85 փոկոսը առաջարկեցին իրենց փարբերակները, իսկ 15 փոկոսն էլ դժվարացան պատասխանել՝ ասելով, որ գուցե պետք

կան ողջ համակարգն իր փարբեր օղակների միջոցով պետք է կարգավորի այդ աշխատանքները: Առավել հաճախ նշվող պատասխաններն էին՝ ազգային անվտանգություն, ոստիկանություն, կառավարության կից որևէ աշխատանքային խումբ: Նկատեցին նաև Ազգային ժողովի մի հանձնաժողով, հասարակական որևէ կազմակերպություն, էկոնոմիկայի նախարարություն փարբերակները: Անձերի անուններ էլ նշվեցին՝ ՏՏ վարչապետ, նախարարներ: Նարցվողներին իրազեկեցինք, որ կա կառավարությանն առընթեր հսկող հանձնաժողով, որը զբաղվում է այդ հարցերի կարգավորմամբ: Նարցվողները այդ մարմնի գոյության մասին չգիտեին, հետո էլ հավելեցին, որ չհմացվածության պատճառը «գուցե այս ոլորտի այնքան էլ խոցելի չլինելն ու սողանքներ չունենալն է»: Մինչդեռ ուշագրավ էր, որ 15 քաղաքացի հսկակ փեղյակ էր, որ գործում է նման հանձնաժողով, չնայած նրանց աշխատանքների բնույթի մասին քիչ բան գիտեին:

Նարցմանը մասնակցողների համար թերևս ամենադժվար հարցը վերջինն էր: Ննարավոր փարբերակների շրջանակը շատ փոքր էր: Շուրջ 70 փոկոսը կարծում էր, որ զանգվածային ոչնչացման գեների արտադրման մեջ կարող են օգտագործվել փոփոխական արտադրության ապրանքները: Ոմանք էլ գտնում էին, որ նման ոլորտում կարող են ներգրավել բնական հանածոներ արտահանող կազմակերպությունները, էներգետիկայի ոլորտը և այլն:

Ամփոփելով կարելի է եզրակացնել, որ թեև քաղաքացիներից ոչ բոլորն են փեղյակ երկակի նշանակության ապրանքների էության մասին, սակայն կարևորում են դրանց վերահսկողությունը՝ որպես երկրի անվտանգության խնդիր:

ՄԻԱՅՆ ՖԻԶԻԿԱ ԶԷ

Ինչպես Հայաստանում զարգացնել բարձր տեխնոլոգիաները,
ինչպես դիմանալ համաշխարհային մրցակցությանը,
ինչպես այլուժինի փոշուց ստանալ թանկարժեք քար:
Այս ամենը՝ «Լազերային տեխնիկայի» օրինակով:

Տեղադր՝ Լիլիթ Գրիգորյանի

Գիտաբար արդյունաբերության զարգացումը ՀՀ կառավարության առաջնահերթություններից է: Բնական ռեսուրսներով աչքի չընկնող Հայաստանում այս ուղղությունը կարող է մեծ եկամուտներ ապահովել, աշխարհաբեր ստեղծել, երաշխավորել կրթություն-գիտություն-արդյունաբերություն կապը: Երևանում գործող «Լազերային տեխնիկա» փակ բաժնետիրական ընկերությունը մի օրինակ է, որն ապացուցում է, որ Հայաստանը կարող է զբաղվել բարձր տեխնոլոգիաներով, երկրից դուրս գտնել սպառման շուկաներ և առաջարկել որակյալ, մրցունակ արտադրանք:

Գործարանն արտադրում է նաև երկակի նշանակության սարքեր. լազերային բյուրեղը, օրինակ, երկակի նշանակության է: Այն կարող է օգտագործվել հատուկ նշանակության տեխնոլոգիական սարքերում: Նշենք, որ երկակի նշանակության ապրանքը կարող է օգտագործվել ինչպես խաղաղ նպատակներով, այնպես էլ զանգվածային ոչնչացման զենքի արտադրության համար: Ուստի նման արտադրանքն արտահանելու համար անհրաժեշտ է սրանալ կառավարության համապատասխան հանձնաժողովի թույլտվությունը՝ փորձագիտական եզրակացության հիման վրա: Տնօրենի



փոխանցմամբ՝ արտահանման և համապատասխան փորձագիտական եզրակացություն սրանալու նպատակով իրենց մեծապես օգնում է NPC-ին Զանգվածային ոչնչացման զենքի չտարածման խնդիրների հայկական հերազտրական կենտրոնը:

Նամաշխարհային շուկայում սեփական արտադրանքը սպառելը հեշտ գործ չէ: Ինչի՞ շնորհիվ է «Լազերային տեխնիկայի» արտադրանքը կարողանում մրցունակ լինել: Նախևառաջ՝ որակի, համոզված է Վահան Վարդանյանը: Բացի այդ, հայկական ապրանքի ինքնարժեքը փոքր-ինչ ցածր է՝ աշխարհի էժան լինելու պատճառով: «Լազերային բյուրեղներն ունիկալ տեխնո-



Բանիմաց երիտասարդ կադրեր մեզ մոտ շահ կան, սակայն նրանց աչքը դրսում է, որտեղ վարձատրությունը համեմատելի չէ հայաստանյան աշխատավարձերի հետ:



◆ ՏԵՂԵԿԱԲ



«Լազերային տեխնիկա» ՓԲԸ-ն հիմնադրվել է 1972թ. որպես լաբորատորիա Երևանի պետական համալսարանի համակարգում: 1985-ին դարձել է գիտահետազոտական միավորում, 1998-ին՝ բաժնետիրական ընկերություն: ՓԲԸ-ի տնօրեն Վահան Վարդանյանի տեղեկացմամբ՝ ընկերությունում այժմ զբաղվում են գիտական աշխատանքներով և փորձնական արտադրությամբ: Արտադրում են լազերային սարքեր, լազերային բյուրեղներ, օպտիկա: Պատվերներ ստանում են ՀՀ պաշտպանության նախարարությունից, և ամբողջ արտադրանքն արտահանվում է, հիմնականում Գերմանիա, Ֆրանսիա, Յնդկաստան, Մեքսիկա, Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Ռուսաստանի Դաշնություն:

ՓԲԸ-ն ունի մոտ 70 աշխատող, որից 40-ն ինժեներատեխնիկական անձնակազմն է: Մասնագետների աշխատավարձը կազմում է 300-400 դոլար:

լոգիաներ են, և Կարաձառքանում, բացի Հայաստանից, այլ տեղ այդ արտադրությամբ չեն զբաղվում: Նույնիսկ Ռուսաստանում, որքան ես գիտեմ, լազերային բյուրեղներ չեն արտադրում: Մասնագետների մեծ մասը մեկնեց Եվրոպա, և Ռուսաստանում այդ ուղղությունը փակվեց», - պատմում է Վ. Վարդանյանը:

Ի դեպ, մասնագետների սերնդափոխության մասին: Բանիմաց երիտասարդ կադրեր մեզ մոտ շահ կան, սակայն նրանց աչքը դրսում է, որտեղ վարձատրությունը համեմատելի չէ հայաստանյան աշխատավարձերի հետ:

Հայաստանում հնարավոր է օրինական ճանապարհով, առանց սրվերում աշխատելու զբաղվել գործարարությամբ: «Մեր ուղղությամբ հնարավոր է, - վստահեցնում է Կարսենը, - մենք մեր ամբողջ արտադրանքն արտահանում ենք և ոչ մի խոչընդոտի չենք հանդիպել: Մամուլում շատ են գրում կոռուպցիայի մասին, անձամբ ես նման ոչ մի դեպքի չեմ հանդիպել»:

Վերադառնանք, սակայն, բարձր տեխնոլոգիաներին: Լազերային բյուրեղ աճեցնելը, ըստ Կարսենի, միայն Ֆիզիկա չէ. այն գիտության և արվեստի միաձուլում է. «Ճիշտ է, բյուրեղի աճեցման ջերմային ռեժիմներ գոյություն ունեն, սակայն այդ ամբողջ ըն-

թացքը պետք է զգալ, ուղեկցել խնամքով: Ինչպես երեխային են խնամում, այնպես էլ բյուրեղը պետք է հասունացնել»: Իսկ բյուրեղի աճեցումը փնտրում է փասն օր: Մոլիբդենից կադապարը դրվում է սարքի մեջ և 2000 ջերմաստիճանում շարժվում համապատասխան արագությամբ, որի ընթացքում կարգավորվում են ջերմային ռեժիմները: Լազերային բյուրեղի մեկ գրամն արժե 300 դոլար: «Լազերային փեխնիկայում» ստանում են սապֆիր (շափյուղա), գրանապ (նոնաքաք), փարբեր ալիքների, երկարության բյուրեղներ: Նայաստանում կիրառվում է բյուրեղի հորիզոնական աճեցման մեթոդը, ինչը, սակայն, արտասահմանում չի օգտագործվում: Այս մեթոդի հիմնադիրն ի դեպ ռուսաստանաբնակ հայ է՝ Բաղդասարով: Դրսում կիրառվում է ուղղահայաց աճեցման եղանակը, որը, ի փարբերություն հորիզոնականի, ավելի թանկ փեխնոլոգիա է: Նշենք, որ սապֆիրի աճեցման համար հումք է ծառայում ալյումինի փոշին, ինչը ներմուծվում է Ռուսաստանից, Չինաստանից: Նամաշխարհային շուկայում մեկ լազերային հեռաչափն արժե 17-18 հազար դոլար, Նայաստանում արտադրվածն անհամեմատ էժան է՝ 6,5-7 հազար դոլար, մինչդեռ որակով բոլորովին չի գիշում որևէ երկրում արտադրվածին:

«Լազերային փեխնիկա» ՓԲԸ-ում օգտագործվող սարքավորումները բավականին թանկարժեք են, դրանք ժառանգություն են մնացել խորհրդային փարիներին: Ներկայումս նման փեխնոլոգիաներ ձեռք բերելն ուղղակի մեր ուժերից վեր է: Նսկայական ներդրումներ են անհրաժեշտ մասնագետների պատրաստման, սարքերի, ենթակառուցվածքների համար:

Ծրագրերի մասին խոսելիս «Լազերային փեխնիկայի» փնտրենը նշեց, որ իրենք այժմ աշխատում են իջեցնել արտադրանքի ինքնարժեքը և նոր սարքեր մշակել: Այս ուղղությունը հեռանկարային է ու բավականին եկամտաբեր: Իսկ ոլորտի զարգացման համար ցանկալի կլինեն որոշակի արտոնություններ սահմանվելին:



Նոր շուկաների ձեռքբերման թեման ևս արդիական է: Այս հարցում Վ. Վարդանյանն ակնկալում է արտասահմանյան երկրներում գործող հայկական դեսպանատների օգնությունը: Նա նաև նկատում է, որ երկրի քաղաքական անկայունությունը մեծապես անդրադառնում է արտահանման վրա: Արտասահմանյան գործընկերները նախընտրում են աշխատել կայուն երկրի հետ: Արտահանմանը վնասում է նաև հայկական շուկայում դոլարի արժեզրկումը:

Եվ մի կարևոր հանգամանք, որ առանձնացնում է պարոն Վարդանյանը. Նայաստանում այս ուղղությամբ աշխատող 4-5 ձեռնարկություն կա, որոնց ուժերը, սակայն, ջլաքված են: Ցանկալի կլինեն նրանց աշխատանքը համակարգել՝ սրելով ձեռքով որևէ հասարակական խորհուրդ:





ՕԳՆԵԼ ԵՎ ԶԱՐԳԱՅՆԵԼ

Նարեկ Բուրյան Իրազարյանը

Հայաստանում ԱՄՆ Կոնսուլոսության Կողմից Ֆինանսավորվում է մի Ծրագիր, որի Նպատակն է Սրբազանման Վերազնայման դժգոհ Երեւելի Բարելւել եւ Ունենել Համարսանսան մասնագէտներ: Փտուղ Ստաթը ՀՀ-ում ԱՄՆ դեմոստրասան սրբազանման Վերազնայման եւ սնչմանների սնչսանգոոթյան Ծրագրի ներկայսնչոոթիչիչն է: Ծրագրի սնսքելոոթյոոհն սրբազանման Վերազնայման Վերսեմոոթյոոհների սնսանսքներին սգնելն ու ջսրգոնելն է, ինչոոհն նսեւ սյսսեղ ներոոհել Համսարգ, որն սրբազանման Վերազնայման Բնագոսնոոհ սնչսն հնոոհների լոոսմանը Կնոոսսի:

- Բացի Նայասրանից, էլ ո՞ր երկրներում եք ծրագիրն իրականացնում, և բոլոր երկրներում արդյո՞ք նույն չափորոշիչներն են գործում:

- Ավելի քան 40 երկրում այսպիսի աշխատանքներ ենք կատարում: Սակայն ընդամենը 23 երկրում ունենք խորհրդատու անձինք: Մեր հիմնական նպատակը բոլոր երկրներում նույնն է, սակայն հաշվի առնելով տարբեր երկրում այդ նպատակին հասնելու ուղիները՝ որոշակի փոփոխություններ, իհարկե, կան: Սա պայմանավորված է նաև երկրների զարգացվածության աստիճանով: Կարևորվում է նա, թե երկիրն արտահանման ոլորտում ինչ մակարդակում է գտնվում, որով էլ որոշվում է, թե ինչպիսի ճանապարհով պետք է այն գնա:

- Ձեր կարծիքով, ի՞նչ պայմաններ են անհրաժեշտ արտահանումը պարզաճ իրականացնելու համար:

- Ցանկացած երկիր իր փարածքում կիրառում է արտահանման վերահսկում: Տարբեր երկրներ փարբեր ձևով և մեխանիզմներով են այն իրագործում: Տիմնականում այդ աշխատանքները մաքսային ծառայողների, սահմանապահների միջոցով է կատարվում, ինչպես նաև այն գերատեսչությունների, որոնք ընդգրկված են արտահանման վերահսկման ոլորտը կարգավորող աշխատանքներին:

Յուրաքանչյուր երկրում, երբ փոփոխությունը նորմալ զարգանում է, ապա արտադրվում են նաև երկակի նշանակության ապրանքներ, որոնց արտահանումը ոչ թե պետք է արգելվի, այլ վերահսկվի: Նպատակը ոչ թե արգելելն է, այլ թույլ չտալ այդ ապրանքները ձեռք բերվեն մարդկանց կողմից, ովքեր այլ նպատակների համար են սգրագործում: Երեք հիմնական նախապայմաններ գոյություն ունեն, որոնք արտահանման վերահսկումը պարզաճ կիրականացնեն: Առաջինը՝ ունենալ ժամանակակից և արդի պահանջներին համահունչ վերահսկումը կարգավորող օրենսդրություն, այսինքն՝ զարգացած լիցենզավորման գործընթաց, որը հնարավորություն է տալիս երկակի նշանակության ապրանքների արտահանումը վերահսկել: Երկրորդը՝ մաքսային ծառայության կարարելագործումն է, և երրորդը՝ սահմանային վերահսկումը ապահովող փեխնիկական միջոցներ:

- Այդ 3 նախապայմանները Նայասրանում ինչպիսի՞ մակարդակում են, և այդ թեներից ո՞րն է առավել թերանում:

- Նայասրանը վերջին հինգ փարիների ընթացքում արտահանման վերահսկման ոլորտում բավականին մեծ գործ է կատարել: Առկա է լավ օրենսդրական դաշտ, ներդրված է բավականին լավ լիցենզավորման համա-

կարգ, որն արդյունավետ է գործում: Այսպիսով, սկսած 2003 թ. Նայասպանում հիշյալ գործունեները կան, ինչն էլ թույլ է տալիս ասել, որ Նայասպանն այս առումով միջազգային պահանջներին համապատասխանում է: Իսկ մաքսային ծառայությանն անդրադառնալով՝ հարկ է նշել, որ մաքսային վարչարարությունը, ուղղված արտահանման վերահսկմանը, բավարար զարգացած չէ: Վերջինիս համար առաջնային խնդիրը մաքսային վճարներ հավաքելն է, այլ ոչ թե արտահանման վերահսկումն ապահովող վարչարարությունը: Մեր կարծիքով՝ այս տեսանկյունից Նայասպանի մաքսային ծառայությունն այսպեղ որոշակի ուշադրություն պետք է դարձնի: Քիչ մասնագետներ կան, որոնք կարող են արտահանման վերահսկման ոլորտը բարձր մակարդակի հասցնել: Սահմանային անվտանգության մասին խոսելը շատ դժվար է, քանի որ ար-

Իմ աշխատանքը քաղաքական չէ, այլ փնիկական: Բայց ցանկացած միջազգային և ներքին քաղաքական իրավիճակ, անշուշտ, ազդում է, այդ թվում նաև արտադրողների մոտեցումների, որոշումների վրա:

- Ինչպիսի՞ իրավիճակ պետք է ստեղծվի երկրում, որ ԱՄՆ-ն այդ ծրագիրը ֆինանսավորումը դադարեցնի, այսինքն՝ ինչ դրոշմապարճառների պարագայում ծրագիրը կկասեցվի ցանկացած երկրում և մասնավորապես՝ Նայասպանում:

- Մի քանի պարճառներ կարող են լինել, որ ծրագիրը դադարեցվի: Ամենացանկալի պարճառը կարող է այն լինել, որ փվյալ երկիրը հասել է այնպիսի մակարդակի, որ այլևս անհրաժեշտություն չկա աջակցություն ցուցաբերել: Իսկ ծրագրի կասեցման հիմք հանդիսացող քաղաքական դրոշմապարճառները շատ-շատ են: Քաղաքական

ՃԱՆԿԱՅԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՆԵՐՔԻՆ ՔՍՊԱՔՍԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿ, ԱՆՇՈՒՇՏ, ԱԶԴՈՒՄ Է ՆԱԵՒ ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐԻ ՄՈՏԵՉՈՒՄՆԵՐԻ, ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎՐԱ:

դեն երկրի վարած քաղաքականությանն ենք առնչվում: Նայասպանի սահմանների մի մասը պաշտպանում են հայ սահմանապահները, մի մասը՝ ռուսները, իսկ Ադրբեյջանի հետ Նայասպանի սահմանը պաշտպանում են ՏՏ պաշտպանության զորքերը: Գոյություն ունեն նաև փարաճքներ, որոնց կարգավիճակը հստակեցված չէ: Ահա այս իրադրությունում, երբ սահմանապահները ներկայացված են 4 ուժերի կողմից, որոշակիորեն բարդացնում են աշխատանքները: Այսուհանդերձ, կարելի է նկատել, որ նրանց աշխատանքները ճիշտ են համակարգվում և պարշաճ ձևով են իրականացվում:

- Այս ենթափնթախում կցանկանալի պարզել՝ արդյո՞ք երկրի արտաքին և ներքին քաղաքական իրավիճակը և խնդիրները կարող են խանգարել արտահանման վերահսկման աշխատանքներին:

- Մա ինձ համար դժվար հարց է, քանի որ ես քաղաքականությամբ չեմ զբաղվում:

գործիչ չեմ, ուստի մանրամասներ չեմ կարող հաղորդել, սակայն կարող եմ մի օրինակ բերել: Ուզեցե՞ք ասել, որ Անդիջանի միջադեպի պարճառով ծրագիրը դադարեցվեց: Մեկ այլ պարճառ էլ կարող է լինել ՏՏ և ԱՄՆ-ի միջև ստորագրված համապատասխան համաձայնագիրն այլևս չարտոնակելու որոշումը, երբ կողմերից մեկն էլ չի կատարում իր պարտականությունները:

- Ո՞ր թվականից է ԱՄՆ-ի կառավարությունը Նայասպանում արտահանման վերահսկման ոլորտում ֆինանսավորման ծրագիր իրականացնում: Եվ այդ փարիների ընթացքում ինչպիսի՞ խնդիրներ եք ունեցել:

- Որքան հիշում եմ, առաջին ծրագրի խորհրդախոս, որ Նայասպան է եկել, եղել է 2001թ.: Մինչ իմ այսպեղ գալը դժվարանում եմ ասել, թե ինչ կարգի խնդիրներ են եղել, իսկ իմ այսպեղ լինելու փարիներին ծրագրի շրջանակներում լուրջ աշխատանքներ են իրականացվել: Մեծ ծավալով թրեյնինգ-

ներ են կազմակերպվել և ԱՄՆ-ում, և Նա-
յասպահում, որոնց իրենց մասնակցությունն
են ունեցել մաքսային ծառայողները: Թրեյ-
նինգները միավաճ են եղել ոլորտի օրենսդ-
րական դաշտի բարելավմանը և լիցենզա-
վորման գործընթացի կապարելագործմա-
նը: Զգալի փոփոխական աջակցություն
ևս ցուցաբերվել է սահմանապահներին,
մաքսային ծառայողներին: Իսկ դժվարու-
թյունից կարելի է առանձնացնել մաքսային
աշխատակիցների համար կազմակերպ-
ված թրեյնինգներին նրանց չմասնակցու-
թյան խնդիրը: Կարծում եմ, որ չմասնակցելու
պատճառն այն է, որ միգրացիոն թավա-
րար քանակի աշխատակիցներ, որ կարո-
ղանան նրանց ժամանակավոր աշխատան-
քից դուրս բերել և ուղարկել դասընթացների:
Այսինքն, առաջարկվել է նրանց թրեյնինգ,
բայց մաքսայինները չեն կարողացել արձա-
գանքել մեր առաջարկին:

փոփոխություններ միգրացիոն աղբյուրն էլ բաց
չեն եղել, սակայն կառավարությունը միջ-
պատրաստակամ է:

- **Ձեր դիտարկմամբ՝ «գործարար-
արտահանող-վերահսկող մարմին»
եռանկյունին Նայասպահում զարգաց-
վածության ի՞նչ մակարդակում է, և
այդ շղթայի օղակներից ո՞րն է ավելի
թույլ:**

- Նայասպահում հիմնականում արտադ-
րող և արտահանողը նույն կառույցն են:
Մինչ 2005թ. արտադրողն արտահանում
իրականացնելիս լուրջ խնդիրներ ուներ,
իհարկե, խոսքը երկակի նշանակության
ապրանքների մասին է: Մինչ այդ չկար
հստակ լիցենզավորման կարգ, արտադրողը
և արտահանողը չգիտեին՝ ինչպե՞ս պետք է
այն կապարվի, ի՞նչ փաստաթուղթ ներկա-
յացնել՝ արտոնագիր ստանալու համար:
Այսօր էլ արտոնագրի հետ կապված որո-

Մեր առջնային խնդիրն է՝ ջարգանքել եւ կասարե- լագործել գերաճեւճողութիւնները՝ սեւմսեւոյաւ սեւմսեւճողութիւնները, մեքսայիւնների սեւմսեւսերը

- **Բացի թրեյնինգներից, էլ ի՞նչ մե-
թոդներով եք փորձում ոլորտի մասնա-
գետների գիտելիքների մակարդակը
բարձրացնել:**

- Թրեյնինգների նպատակը հենց արտա-
հանման վերահսկման ոլորտում ընդգրկված
գերափոփոխությունների աշխատակիցներին
ճիշտ վարչարարություն իրականացնելու մե-
խանիզմները փոխանցելն է: Թրեյնինգներ
կազմակերպվում են նաև արդյունաբերու-
թյան ներկայացուցիչների համար, որպեսզի
ճիշտ կազմակերպեն իրենց գործունեու-
թյունը: Ոչ միայն փոփոխություններ ենք փորձը
ներկայացնում, այլ ապահովում ենք համա-
պատասխան փոփոխական միջոցներ, որ
կարողանան աշխատանքները հստակ իրա-
գործեն:

- **ՆՆ կառավարությունը որքանո՞վ է
աջակցում այս ծրագրի իրագործմանը:**

- ՆՆ կառավարությունը ցուցաբերում
է աջակցություն և համագործակցության
համար միջոց բաց է: Իսկ առանձին գերա-

շակի խնդիրներ կան: Մի անգամ դիմելով
ու արտոնագրի ստանալով՝ չի նշանակում
առանց արտոնագրի մյուս անգամ կարող
են արտահանել արդեն մեկ այլ երկիր: Ամեն
անգամ պետք է դրմել և արտոնագրի ստա-
նալ: Իսկ թույլ օղակներից շարունակում է
մնալ վերահսկման վարչարարությունը:

- **ՆՆ-ում այս ծրագիրը կյանքի կոչե-
լու համար ո՞րն է առաջնային լուծում
պահանջող խնդիրը, որի ուղղությամբ
այժմ աշխատում եք:**

- Այսօր օրենսդրական դաշտը զարգա-
ցած է, և մեր ծրագրի համար առաջնային
խնդիր է՝ զարգացնել և կապարելագոր-
ծել գերափոփոխությունները՝ սահմանապահ
ծառայությունները, մաքսայինների աշխա-
տանքը: Նիմնականում վերջիններիս աշխա-
տակիցներին պետք է գիտելիքների, փորձի
փոխանցում, որպեսզի օրվա պահանջներին
համահունչ աշխատանքներ իրականացնել՝
ապահովելով փոփոխական հագեցվա-
ծությամբ:



սեփական ՈՒՂԵԾԻՐ

«Օրբիս» գործարանն իր ՀԱԿԱՅԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՎ, մի բանի մասնագետներով իսկական բանավորական ԵՎԱՆ Է ՀԻՇԵՃԱՆՈՒՄ: «Խորհրդային սարիներին ԱՅՍԵՂ ԱՄԵՆ ՕՐ 6 ՀԱՉՍՐ ՄՍՐԴ ԷՐ ԱՃԻՆՏԱՆՔԻ ՊԱՅԻՄ», - ՀԻՇՈՒՄ ԵՆ «ՕՐԲԻՏԱՅԻ» ՀԻՆ ԱՃԻՆՏԱՏՈՂՆԵՐԸ ԵՒ ԾԱՆՈԹՅԱՆՈՒՄ ԻՐԵՆՉ ՀԱՐԱՏՈՒԹՅԱՆ՝ ԱՆՉԱԾ ՀԱՍՏՐԱԿՍՐԳԻՉ ԴՈՒՂՈՒՆՎԱԾ ՀԱՍՏՈՋԱՆԵՐԻ, ԱՍՐԵՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ: ՀԱՄ ԷՂ ԱԿԱՏՈՒՄ, ՈՐ ԻՐԵՆՉ ԱՐՏԱԳՐԱՆՔԻ ՈՐԱԿՈՎ ԿՍՐՈՂԱՆՈՒՄ ԵՆ ՈՏՔ ԳՅԵՂ ԱՆԳԱՄ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԵՏ: Ինչպե՞ս է դա նրան շօշուփՈՒՄ, ԱՅՄ ԵՒ ԲԱԶՈՒՄ ԱՂ ԽՆԴԻՐՆԵՐԻ մԱՍԻՆ ԻՐ ՏԵՍԱԿԵՏՆԵՐՆ Է ՆԵՐԿԱՅՅԱՆՈՒՄ «ՕՐԲԻՏ» ՓԲԸ-Ի ՏԱՐԵՆ ՏԻԳՐԱՆ ԳԻՖԼԻԿՅԱՆԸ:

Տեղադր՝ Լիլիթ Գրիգորյանի

ԴԺՎԱՐ Է ՄԻՆՁԵՒ

ՎԵՐԱԳՈՐԾԱՐԿՈՒՄ ՏՆՈՂ ՃՆԱՓՆԱ

90-ականների սկզբին պլանային Կապիտալիստական փոփոխության փուլում փակման վարակի առաջ կանգնեցրեց Նայասարանի գրեթե բոլոր գործարանները: Այլևս չկար պարզապես իջեցնող Կենտրոնը, փոխարենը եկան ինքնուրույն գործելու, շուկաներ ու ներդրումներ հայթայթելու ժամանակները: Նույն այդ ճանապարհն անցավ «Օրբիտան»: Կուրսավորված հսկայական պարտքեր, գույքահարկ, հողի հարկ, հարկային այլ պարտավորություններ. մարվել է ավելի քան 130 միլիոն դրամ: Դրան գումարած աշխատավարձի պարտքերը, որոնք մարվել են ասպիճանաբար՝ փարիսերի ընթացքում: Արդյունքում 1993-ից վերագործարկված «Օրբիտան» այսօր դարձել է եկամտաբեր հիմնարկություն: Իհարկե, դրանք այն եկամուտները չեն, որ կարելի էր ակնկալել, քանի որ գործարանի հսկայական փարածքը բավականին դժվար է պահել, բացի այդ, մեծ ծախսեր է պահանջում սարքավորումների արդիականացումը: Այնպես որ՝ շահույթը գրեթե ամբողջությամբ ուղղվում է այս խնդիրների լուծմանը:

ՎԱՏԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՄԵՆԱԾՅԱԿ ԲՆԱՆ Է

«Օրբիտայի» արտադրատեսակների մեջ մտնում են նաև երկաթի նշանակության ապրանքներ, որոնց արտահանման մեխանիզմները, ըստ պարոն Զիֆլիսի մի քիչ շար են բարդացված:

«Պարկերացրեք՝ մեքենաները բեռնված՝ ապրանքը պետք է փանեն Ռուսաստան, սակայն թղթափայտային պարտավորությունները ձեռքով արտահանումը ձգձգվում է: Իսկ այդ ժամանակը գործարարից ու նրա գրպանից է գնում: Ի վերջո, պարտավորություններն չեն հերաքորում մեր խնդիրները:

Պայմանավորվածությունները չեն պահվում, ապրանքն ուշանում է, վստահությունը կորցնում ես, մյուս անգամ հերդ գործ չեն բռնի»:

ՄԻՋԱՆ ԱՆԵՒՏՐՈՎ ԵՐԿԻՐ ԳՆԱ ՊԱՇԻ

Նայասարանը ժամանակին արդյունաբերական երկիր էր՝ իր մասնագետներով, ձևավորված ավանդույթներով: Եվ արդյունաբերական երկրի հին համբավը վերականգնելու համար գործող իշխանությունների քաղաքական կամքն է հարկավոր: «Վերներում պետք է նստեն, քննարկեն, ռազմավարություն մշակեն ու կյանքի կոչեն: Մարդիկ ինչո՞ւ են արտագաղթում. աշխատանք չկա: Այդ աշխատանքն էստեղ պետք է սրնծել: Խորհրդային փարիսերին համակարգն էր պարտադրում աշխատել, կադրեր էին պարտաստել, որոնք պետք է գային փոխարինման, և ընդհանուր այդ շարժից ոչ մի փող չէր փախչի: Գուցե դա իր վարկողմն էլ ուներ, բայց մարդկանց սպիտակ էր աշխատել: Այսօր հակառակ պարկերն է: Ի վերջո, բոլորն իրավաբան, բժիշկ ու ֆինանսիստ չեն կարող դառնալ: Մեզ արհեստավորներ են պետք, բանվորական մասնագետներ», - իր մտածածությունն է հայտնում «Օրբիտայի» տնօրենը:

«ՏԱՆԻՔ» ԿՆԻՎԱԾ Է ԲԱՄՈՒ ՈՒՂՈՒԹՅՈՒՆԻՑ

Նայասարանյան Կապիտալիստական փուլում, ըստ պարոն Զիֆլիսյանի, մրցակցային դաշտ չի կարող լինել. «Եթե մի մասն ունի արտադրություններ, մյուս մասը սեղմված է օրենսդրական դաշտի փակ, ինչ մրցակցային դաշտի մասին է խոսքը: «Տանիք» կոչվածն էլ ժամանակավոր բան է: Այսօր կա,

վաղը չկա: Զաղաքական քամին ուղղությունը փոխի, փանիքը էլ փուլ կգա: Պարզապես հարցերին ճիշտ մտնեցումներ են հարկավոր: Եվ քանի չի վերացել փարիսեր առաջ ձևավորված պոպուլիզմը, պետք է զարգացման հիմք դնել հերաքոր սերունդների համար»:





Ինժյուեռն դիմեսալ մոնոպոլիտներ

«Նամառորեն ձգվում ենք աշխարհի դրսի շուկաների հետ: 100 կգ ուժ ենք օգտագործում, թե 5-ը փեղ հասնի, լավ է: Ժամանակ, ավելորդ ծախսեր ու քաշքշուկ է կլանում այդ ամենը, ինչը վերջում մի չնչին փոխհատուցում է տալիս: Արտասահմանյան շուկաներում մրցունակ լինելու առաջին նախապայմանը «Օրբիտայի» արտադրանքի ցածր ինքնարժեքն է և բարձր որակը: Սակայն այն միտումները, որ նկատվում են այսօր (գների թանկացում), կարող են հանգեցնել նրան, որ արտադրանքի ինքնարժեքը բարձրանա, ինչը ևս մեկ դժվարություն կառաջացնի մրցակցության առումով: Բիզնեսը նաև փոխադարձ համաձայնությունների դաշտ է: Առանց դրա ոչինչ չի սրացվի: Վերջին փարհներին բավականին մեծ շրջանառություն ենք ունեցել: Մի փոքր ժամանակ է հարկավոր՝ վերակազմավորվելու, կայունանալու համար: Ի վերջո, և՛ ներքին շուկան, և՛ հարկային դաշտը պետք է կայունանան»:

Մոտսուր էն, որ Ինժ-որ մեկն Իրենճ ՊԱՀԻ...

Այսօր Նայասարանի աշխարհաշուկայում ամենամեծ պահանջարկն ունեն բանվորական մասնագիտությունները: Սա ցանկացած գործարարի ամենացավոք խնդիրն է: «Փորձում ենք երիտասարդներին բերել-սովորեցնել, վարձարել, բայց ոչ մի ձգվում չկա: Նամագործակցում ենք զբաղվածության ծառայության հետ, սակայն կադրերով ապահովել չեն կարողանում: Ընդհանրապես հերիտրիդային ծանր տարիները

վար հերևանքներ են թողել. մարդիկ ծուլացել են, փրավորությունն այն է, որ սպասում են՝ ինչ-որ մեկն իրենց պահի»:

Իսկ վարձարությունն «Օրբիտայում» ցածր չէ: Գործարանում այսօր կա 120 աշխատող: Արտադրամասերում աշխատավարձը գործարքային է, մինչև 180 հազար դրամ: Միջին աշխատավարձն ընկերությունում 90-100 հազար է:

Որդեալ Վերջսբես

«Օրբիտա» ՓԲԸ-ն Նայասարանի խոշոր հարկատուների ցանկում է: «Միայն աշխատելով կարելի է հասնել հաջողության, հակառակ դեպքում այս գործարանն մուրք գործելն անհիմաստ կլինի», - ասում է փնօրենը և վարահեցնում, որ ցանկության դեպքում դրական արդյունքի հասնել կարելի է. վկան՝ «Օրբիտայի» հաջողությունները:

◆ **ՏԵՂԵԿԱՆՔ**



«Օրբիտան» հիմնադրվել է 1976 թվականին: Ի սկզբանե եղել է սարքաշինական գործարան: ԽՍՀՄ-ից հետո վերագործարկվելով՝ հին արտադրությունը վերակազմակերպվել է՝ միաժամանակ վերապրոֆիլավորվելով և նորանոր արտադրություններ բացելով: Այստեղ հիմնականում արտադրվել է, այժմ էլ արտադրվում է էլեկտրոնային օպտիկա: Այս ապրանքատեսակը թողարկվում է և՛ ՀՀ պաշտպանության նախարարության, և՛ ՌԴ-ի, և՛ Գերմանիայի պատվերներով: Գյումրու քար մշակող գործարանի հետ համատեղ զբաղվում է քարհատ հաստոցների արտադրմամբ: Վերջին տարիներին ներդրվել են գործիքային, ոչ ստանդարտ արտադրություններ: «Օրբիտան» այսօր Միջազգային բիզնես կենտրոնի հիմնարկներից է, որի մեջ մտնում են մի շարք ձեռնարկություններ, այդ թվում՝ «Ալմաստ» գործարանը, Գյումրու քարհատ, Ապարանի «Արագած» գործարանները: